

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 4/2

3 փետրվարի 2015 թ.

Քննարկվեց «Փարպի» ՋՕԸ 19.01.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի ժ/պ 29.12.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 276329 որոշման դեմ:

«Փարպի» ՋՕԸ գանգատում բերված փաստարկները.

15.01.2015 թ-ին ստացվել է Աշտարակի ՏՀՏ-ի կողմից ուղարկված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 276329 որոշումը, որով 2014 թ-ի հուլիս-հոկտեմբեր ամիսների եկամտային հարկի հաշվետվությունները չներկայացնելու համար ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով «Փարպի» ՋՕԸ (այսուհետ նաև ընկերություն) տնօրենը ենթարկվել է վարչական տույժի:

Դեռևս 20.08.2014, 22.08.2014, 29.08.2014, 11.09.2014, 22.09.2014, 01.10.2014, 23.10.2014 թ.թ.-ին ՊԵԿ-ին (նաև Աշտարակի ՏՀՏ-ին) ուղղված գրություններում ընկերությունը ներկայացրել է լուծում պահանջող հետևյալ հարցը:

2014 թ-ի օգոստոսի 20-ից սկսած ընկերությունը չի կարողացել ներկայացնել հարկային հաշվետվությունների 114 և 109 ձևերը: 20.08.2014 թ-ին դա կապված էր «Taxservice.am» կայքի ոչ նորմալ աշխատանքի հետ, որի մասին գրավոր տեղյակ է պահվել Աշտարակի ՏՀՏ-ին: Արդյունքում ընկերությունը ստիպված հուլիս ամսվա եկամտային հարկի հաշվետվությունը հարկային տեսչություն է ներկայացրել փոստային առաքմամբ:

Հաջորդ օրը, երբ կայքի աշխատանքները կարգավորվել են, ընկերությունը չի կարողացել լրացնել 114 և դրա հիման վրա նաև 109 ձևերը: Ընկերությունը էլեկտրոնային փոստով դիմել է «ekenq» ՓԲԸ-ին՝ ներկայացնելով խնդիրը, որին ի պատասխան առաջարկվել է դիմել ՊԵԿ: Զանգահարելով 060544444 հեռախոսահամարով օպերատորների միջոցով կարողացել են գտնել 114 ձևի չբացվելու պատճառը, որը կայանում էր նրանում, որ ընկերությունը և ևս մեկ այլ ընկերություն 01.07.2014 թ-ից հանձնվող եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկի համակարգում՝ Աշտարակի ՏՀՏ-ի կողմից գրանցվել են որպես ՀՈԱԿ:

Նշվածը պարզելուց հետո՝ 22.08.2014 թ-ին, Աշտարակի ՏՀՏ-ին տեղեկացվել է համապատասխան ուղղում կատարելու համար:

Սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու կարգի դրույթը հաշվի առնելով, և նկատի ունենալով այն հանգամանքը, որ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում ուղղումը չի կատարվել, ընկերությունը 29.08.2014 թ-ին նորից գրությամբ դիմել է Աշտարակի ՏՀՏ՝ փոստային առաքմամբ ներկայացնելով նաև 114 ձևում ընդգրկվող աշխատակիցների տվյալները:

Արդեն լրանում էր 2014 թ-ի օգոստոս ամսվա եկամտային հարկի հաշվետվության ներկայացման ժամկետն, սակայն համակարգում փոփոխություններ դեռ չէին կատարվել:

Ստիպված ընկերությունը 22.09.2014 թ-ին և 01.10.2014 թ-ին դիմել է Ֆինանսների նախարարին՝ ներկայացնելով խնդիրը: Պետք է կատարվեն ծրագրային ուղղումներ՝ կանոնավոր կերպով հաշվետվությունները էլեկտրոնային եղանակով ՊԵԿ ներկայացնելու համար:

Կապվելով ՊԵԿ համապատասխան ծառայության հետ պարզվել է, որ ընկերության դիմումով զբաղվում են, որի արդյունքում համակարգում պետք է կատարվեն ծրագրային ուղղումներ:

Ծրագրային ուղղումը կատարելուց հետո հուլիս-հոկտեմբեր ամիսների հաշվետվությունների անգամ ճշգրտման տարբերակով ներկայացումը ևս հնարավոր չի եղել, քանի որ ծրագրային ուղղումը կատարվել էր թերի, և ապահովում էր միայն ուղղման պահից հաշվետվությունների ներկայացում: Նշված փոփոխությունից հետո ընկերությունը կարողացել է էլեկտրոնային եղանակով հանձնել 2014 թ-ի նոյեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվետվությունը: Սակայն, մինչև օրս չի կարգավորվել 2014 թ-ի հուլիս-հոկտեմբեր ամիսների համար 109 ձևի լրացման հետ կապված խնդիրը՝ հաշվի առնելով սոցիալական վճար կատարելու պարտականությունից հրաժարվելու կարգի դրույթները:

ՊԵԿ-ից կապվել են ընկերության հետ և հայտնել, որ 2014 թ-ի նոյեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվետվությունը էլեկտրոնային եղանակով հանձնվել է: Նաև հայտնվել է, որ հուլիս-հոկտեմբեր ամիսների համար ներկայացվող եկամտային հարկի հաշվետվությանը վերաբերվող ծրագրային ուղղումներն ընթացքի մեջ են:

ՊԵԿ-ին (նաև Աշտարակի ՏՀՏ) ուղղված դիմումներում ընկերությունը նշել է նաև, որ հաշվետվությունների 114 և 109 ձևերն էլեկտրոնային եղանակով չ'ներկայացվելու մեջ բացակայում է իր մեղքը: Նշվել է նաև, որ նշված խնդիրն առաջացել է 01.07.2014 թ-ից հետո ընկերությանը որպես ՀՈԱԿ դիտարկելու պատճառով, ինչպես նաև, որ ընկերության կողմից հաշվարկված եկամտային հարկի բոլոր վճարումները կատարվել են ժամանակին, կատարվել են նաև կանխավճարային մուծումներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ընկերությունը խնդրում է վերանայել Աշտարակի ՏՀՏ-ի թիվ 276329 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի ժամանակավոր պաշտոնակատարը, քննելով 22.12.2014 թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Փարպի» ՋՕԸ տնօրենը օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2014 թ-ի հուլիս-հոկտեմբեր ամիսների եկամտային հարկի հաշվարկները: Արդյունքում, ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի ժ/պ կողմից 29.12.2014 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 276329 որոշումը, որով «Փարպի» ՋՕԸ տնօրենը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Աշտարակի ՏՀՏ պետի ժ/պ 29.12.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 276329 որոշումն ընդունվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով նախատեսված պահանջների խախտմամբ: Այսպես, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն. «Վարչական պատասխանատվության ենթարկվող անձը իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին, բացատրություններ տալու, ապացույցներ ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, գործի քննության ընթացքում օգտվելու փաստաթանի իրավաբանական օգնությունից, ելույթ ունենալու մայրենի լեզվով և օգտվելու թարգմանի ծառայություններից, եթե չի տիրապետում այն լեզվին, որով տարվում է վարույթը, գանգատարկելու գործով որոշումը: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին»:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ «Փարպի» ՋՕԸ տնօրենը ստացել է ծանուցագիր վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու համար: Սակայն, ծանուցագրում գործի քննության տեղի և ժամանակի վերաբերյալ տվյալներն անընթեռնելի լինելու հետևանքով ընկերության տնօրենը հնարավորություն չի ունեցել մասնակցել գործի քննությանը: Արդյունքում, գործը քննվել է «Փարպի» ՋՕԸ տնօրենի բացակայությամբ:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի ժ/պ 29.12.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 276329 որոշումն ընդունվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.»:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ «Փարպի» ՋՕԸ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի ժ/պ 29.12.2014 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 276329 որոշումը հսկ գործը կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝

**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**